



*«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ*

*ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ  
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ  
ԴԱՍԸՆԹԱՑ*

*ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔ*

*Հետազոտության թեման՝ Նորագույն տեղեկատվական  
տեխնոլոգիաների ազդեցությունը և  
դերը սովորողի հոգեբանության  
զարգացման գործում*

*Առարկան՝ Մաթեմատիկա*

*Հետազոտող ուսուցիչ՝ Հախվերդյան Շահեն*

*Ուսումնական հաստատություն՝ Մ. Մխոյանի անվան համար  
68 հիմնական դպրոց*

*Երևան 2023*

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն .....	3
Գլուխ 1: Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների դերն ու ազդեցությունը .....	5
1.1: Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների դերը և նշանակությունը մարդու կյանքում .....	5
1.2: Տեղեկատվական տեխնոլոգիաների և թվային սարքերի ազդեցությունը երեխաների զարգացման վրա .....	7
Գլուխ 2: Տեղեկատվական տեխնոլոգիաների դերը կրթության ոլորտում .....	11
2.1 Մեդիամանկավարժության նշանակությունը և հիմնախնդիրները .....	11
2.2 Համացանցի արդյունավետ օգտագործումը սովորողի կողմից .....	13
Գլուխ 3: Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման վերաբերյալ հարցում .	15
Եզրակացություն .....	20
Օգտագործված գրականության ցանկ .....	21

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից աշխարհում մարդու կյանքը անհնար է պատկերացնել առանց տեղեկատվական տեխնոլոգիաների: Մենք ամենժամյա ռեժիմով այս կամ հարցին լուծում տալու համար օգտվում ենք թվային սարքերից. հաշվիչ, բջջային հեռախոս, համակարգիչ, հեռուստացույց: Մարդկությունը իր ողջ զարգացման ընթացքում միշտ ճանապարհներ է փնտրել, որպեսզի ավելի հեշտացնի իր կենցաղը, իր կյանքը: Այն ինչին հասնում էր մարդը դարեր առաջ ժամերի կամ օրերի ընթացքում, այժմ դրան կարող է հասնել հաշված րոպեների ընթացքում՝ կիրառելով արդի թվային սարքեր: Մարդու կյանքը դրանով իհարկե հեշտանում է, բայց ինչ գնով: Այժմ մարդու փոխարեն հաշվում, նույնիսկ մտածում են թվային սարքերը, և այդ ամենի արդյունքում մարդը սկսում է աստիճանաբար դադարել իրեն նեղություն տալ, մտածել, «գլուխ ջարդել», չէ՞ որ դա իր փոխարեն կարող է անել օրինակ արհեստական բանականությունը:

Այս ամենը իհարկե մարտահրավեր է մարդկության համար: Մի կողմից մարդու համար ստեղծվում են թվային սարքեր, որոնք հեշտացնում են նրա գործը, մյուս կողմից այդ սարքերը մարդուն դարձնում են ավելի քիչ մտածող, ավելի քիչ ստեղծագործող, ավելի քիչ նորարար: Իսկ արդյո՞ք հնարավոր չէ այս ամենը դիտարկել ոչ թե որպես հակասություն, այլ՝ համագործակցություն: Մի՞թե հնարավոր չէ նորագույն թվային սարքերը օգտագործել ի շահ մարդու մտավոր ունակությունների, կրթական աստիճանի բարձրացման: Իհարկե հնարավոր է: Ժամանակակից կրթական համակարգը պետք է կարողանա հարմարեցնել իր ուսումնական, դաստիարակչական մեթոդները նորագույն թվային սարքերին, քանզի արդեն պարզ է, որ դրանց առկայությունը մեր կյանքում այլևս անխուսափելի է և մեծ տեմպերով ավելի մեծ տեղ է զբաղեցնում:

Այս ամենի համատեքստում, ի տարբերություն չափահաս մարդկանց, ավելի խոցելի են դառնում երեխաները: Հասուն մարդը, ով արդեն ձևավորվել է որպես անհատ, քիչ թե կարողանում է կառավարել իր՝ թվային սարքերից օգտվելու թե՛

Ժամանակը, թե՛ միջոցները, թե՛ ուղղվածությունը: Ասել է թե չափահաս մարդը գիտի, թե իրեն ինչ է պետք համացանցում, ինչի համար է համացանցը, ինչի համար են նորագույն թվային սարքերը: Իսկ երեխաները դեռևս որպես անհատ ձևավորված չեն, նրանք դեռևս չգիտեն լավ ու վատ ինֆորմացիան, լավ ու վատ ֆիլմը կամ մուտֆիլմը իրարից տարբերել, և իհարկե երեխաները շատ ավելի շատ են տարվում համակարգչային խաղերով և այն ժամանակահատվածը, որ երեխան պետք է անցկացնի բակում, ընկերների հետ, սպորտով զբաղվի, դրա փոխարեն նա հիմա նստում է համակարգչի էկրանի դիմաց, կամ բջջային հեռախոսով է խաղեր խաղում: Համակարգչի և բջջային հեռախոսի առկայությամբ երեխայի համար շատ ավելի նվազ հետաքրքրություն է առաջնում գիրքը: Բացի այդ սովորաբար մարդը ավելի հակված է դեպի հեշտը, դեպի մատչելի հասանելին, իսկ ավելի հեշտ է համակարգչով խաղ խաղալ, թե գիրք կարդալ կամ մաթեմատիկական խնդիրներ լուծել, պատասխանն ակնհայտ է:

Մանկավարժների և ծնողների առջև բարդ խնդիր է դրված: Քանի որ ուղղակի անհնար է արգելել երեխաներին օգտվել թվային սարքերից, մենք է պետք է դրանք կարողանանք հնարավորինս ի նպաստ օգտագործել երեխաների կրթության և դաստիարակության գործում: Դա անելու համար նախ և առաջ պետք է հասկանալ, թե նորագույն թվային սարքերը, ինտերնետը ինչ ազդեցություն են ունենում երեխայի զարգացման վրա: Սույն աշխատանքի մեջ փորձել ենք գտնել այս հարցերի պատասխանները: Կատարել ենք հարցում 8-9-րդ դասարանի սովորողների շրջանում, որի արդյունքները ներկայացված են 3-րդ գլխում:

Հետազոտության համար առաջադրվել են հետևյալ հարցերը.

1. Ի՞նչ ազդեցություն են ունենում նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաները երեխաների զարգացման վրա:
2. Սովորողները որքանո՞վ արդյունավետ են օգտագործում նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաները:

# ԳԼՈՒԽ 1

## ՆՈՐԱԳՈՒՅՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԴԵՐՆ ՈՒ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

### 1.1 Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների դերը և նշանակությունը մարդու կյանքում

Ձեռագրերի ստեղծումից հետո առաջին քայլերը դեպի տեղեկատվական հասարակություն հատկանշվեցին էլեկտրական հեռագրի, այնուհետև հեռախոսի և ռադիոհեռախոսի միջոցով, մինչդեռ հեռուստատեսությունը, ինտերնետը, ավելի ուշ բջջային հեռահաղորդակցումը և GPS-ը ասոցացրեցին պատկեր, տեքստ և «առանց լար» բառերը: Այսօր ինտերնետը և հեռուստատեսությունը դարձել են հասանելի բջջային հեռախոսներով: 20-րդ դարի վերջին տասնամյակում ինֆորմատիկայի և հեռահաղորդակցման մոտեցումը նպաստում են բաղադրիչների փոքրացմանը, որոնք թույլ են տալիս 2000 թվականից սկսած արտադրել «բազմաֆունկցիոնալ» սարքեր: ՏՀՏ-ների օգտագործումը չի դադարում տարածվել հատկապես հարուստ երկրներում, բայց միջտ կա վտանգ՝ շեշտադրելու սոցիալական և թվային բեկումը, ինչպես նաև սերունդների միջև անջրպետը: Մարդկային գործունեության ամենատարբեր ոլորտներում՝ գյուղատնտեսությունից ու անտառային տնտեսության կառավարումից մինչև տիեզերական միջավայրի համալիր դիտարկում (մոնիթորինգ) կամ կենսական բազմազանություն, ակտիվ ժողովրդավարություն, առևտրի, հեռաբժշկության, տեղեկատվության, տվյալների բազայի կառավարում, ցանցի, մեքենայացման և ռազմական բնագավառներ, աջակցություն հաշմանդամներին և այլն, ՏՀՏ-ն նպատակ ունի հատուկ տեղ գրավել մարդկային կյանքում և հասարակական գործունեության մեջ:

Մտքերի, տեղեկությունների և լուրերի փոխանակումը հասարակական կյանքի անհրաժեշտություններից է համարվում: Վաղ կազմավորված հասարակություններում կապի միջոցներն էին լեզուն ու բանավոր խոսքը: Հասարակությունների ընդլայնման ու մշակութային առաջադիմության հետ զուգընթաց, կապի միջոցները նույնպես կատարելագործվեցին, և կյանքի եղանակները, մտքերն ու լուրերը փոխանակելու համար մարդկությանն ընձեռեցին նոր հնարավորություններ: Այնպես, որ մեծ թվով գիտնականներ, նկատի առնելով տեղեկությունների, մտքերի ու մարդկային խոհերի փոխանակման մեջ նորագույն տեխնոլոգիաների ակնառու դերը, ժամանակակից պատմական շրջանն անվանել են «Հաղորդակցության դարաշրջան»:

Ներկա դարաշրջանում, մարդ արարածը մուտք է գործել տեխնոլոգիաների նոր դարաշրջան, որն արագ տեմպերով փոփոխության է ենթարկել նրա հասարակական կյանքը: Կապի միջոցները չեզոք միջոցներ չեն: Նորագույն տեխնոլոգիաները ամենաշատ ազդեցությունը թողել են մարդկային կյանքի վրա և նրա համար ստեղծել են նոր աշխարհ: Քաղաքական, տնտեսական, գեղագիտական, հոգեբանական, բարոյական և հասարակական տեսանկյունից այդ երևույթի թողած ազդեցության հետևանքները խոր են այնքանով, որ մարդկային կյանքի և հոգու ոչ մի անկյունը զերծ չի մնացել այդ ազդեցությունից: Եվ այս ամենից զերծ չեն մնացել նաև երեխաները, այս ամենի համատեքստում փոխվել են նաև երեխաների հետաքրքրությունները:

Այժմ երեխաներին հետաքրքրում են համակարգչային խաղերը և շփումները սոցիալական ցանցերում: Այժմ երեխաների մեծ մասը իր մանկությունն անց է կացնում համակարգիչների, հեռախոսների առաջ: Հատկապես կրտսեր դպրոցականների տարիքին հատուկ է հետաքրքրասիրությունը, հուզական բարձր գրգռվածությունը: Ասված խոսքը, վառ գույները, դիտած կինոնկարը, կարդացած հեքիաթը ամբողջությամբ գրավում, կլանում են երեխաներին: Կրտսեր դպրոցականների տարիքի մյուս առանձնահատկությունը ընդօրինակումն է: Նրանք շատ սիրում են կրկնել ու վերարտադրել մեծերի, հերոսների շարժումները, վարքի գծերը: Հաշվի

առնելով այս տարիքին բնորոշ վերը նշված առանձնահատկությունները բացահայտենք, թե ի՞նչ ազդեցություն կարող են ունենալ նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաները երեխաների վրա և ի՞նչ խնդիրներ կարող են առաջացնել:

## **1.2 Տեղեկատվական տեխնոլոգիաների և թվային սարքերի ազդեցությունը երեխաների զարգացման վրա**

Մեր օրերում երեխաները մեծահասակների «շնորհիվ» ծնված օրվանից ուզած - չուզած անպայման շփում են ունենում որևէ տեսակի թվային տեխնիկայի հետ: Բոլորիս միջավայրում արդեն իսկ այնքան շատ է թվային տեխնիկաների ներգրավվածությունը, որ երեխաները իրենք նույնպես սկսում են հետաքրքրվել դրանցով: Եթե նույնիսկ չհետաքրքրվեն, ապա նրանց միջավայրում թվային տեխնիկայի ներկայությունը արդեն իսկ ազդեցություն ունենում է երեխաների հոգաբանության, բնավորության գծերի, սովորությունների վրա: Օրինակ գիտնականները ապացուցել են, որ տանը ուղղակի հեռուստացույցի միացրած լինելը արդեն իսկ վնասակար ազդեցություն է թողնում երեխայի վրա: Երեխան դրանից սկսում է դառնալ նյարդային, ջղային, սկսում է ոչ միայն լացել, այլ նաև չլսել ծնողներին: Երեխաները որպես անձ ձևավորվում են նախ և առաջ ծնողներին լսելով, նրանց հետ զրուցելով: Հիշենք, որ անցյալում մայրերը երեխաներին քնեցնելիս օրորում էին՝ երգելով, արթուն ժամանակ՝ գրկած կամ ծնկին դրած խաղիկներ էին ասում՝ ապահովելով նրանց բնականոն ներդաշնակ զարգացումը: Դրա արդյունավետությունը գիտականորեն բացահայտել է գերմանացի հետազոտողներից մեկը: Իսկ ժամանակակից աշխարհում ծնողները շատ չեն զրուցում երեխաների հետ, նույնիսկ շատ չեն խոսում միմյանց հետ, այդ միջավայրում երեխաները ավելի շատ «լսում» են հեռուստատեսությանը, համակարգչին, բջջային հեռախոսին և այլն:

Երեխայի ֆիզիկական ու հոգևոր ներդաշնակ զարգացման համար անհրաժեշտ է մարդ, որը կդառնա բառի միջնորդը: Միայն այդ դեպքում բառը երեխայի ես-ը գերզգայական ոլորտից կուղեկցի դեպի զգայական ոլորտ: Միայն այդ ժամանակ բառը կարող է զգայական աշխարհից ազատել զերզգայական ուժերը, որոնք անհրաժեշտ են երեխային, մի կողմից՝ հոգու և մտքի, մյուս կողմից՝ հոգու և մարմնի միջև կապ հաստատելու համար: «Ի սկզբանե էր Բանը» և Բառը նրան մարդ դարձրեց, իսկ նա միայն Բառի էներգիան փոխանցում է երեխային, որը ձգտում է մարդ դառնալ:

Փոքր տարիքում երեխայի մեջ անընդհատ պահանջ է առաջանում կապ գտնելու առարկաների, պատկերների և երևույթների միջև, որը դրսևորվում է անընդհատ հարցեր տալով: Ավելի ուշ շրջանում երեխայի դատողությունը ավելի է խորանում՝ ձևավորելով վերլուծական դատողական, խոհական մտածողություն, որն էլ ձևավորում է բանականությունը: Դրա շնորհիվ մարդը կարողանում է բացահայտել իրական կյանքի ընդհանուր օրինաչափությունները:

Տեղեկատվական տեխնոլոգիանորը ազդում են նաև երեխայի ուսման գործընթացի վրա: Որքան վաղ հասակից է երեխան տարվում տեղեկատվական տեխնոլոգիանորով, այնքան տուժում է առաջադիմությունը, քանի որ ծանրաբեռնվում են ուշադրությունը, լսողական և տեսողական համակարգերը: Երեխան պետք է միշտ ակտիվ շարժվի, ձեռք բերի նոր հմտություններ, նկարի, բռնի, կառուցի, իսկ թվային տեխնիկաներով զբաղվելու ժամանակ երեխան պասիվ է, չի զարգանում: Մի շարք հետազոտություններ փաստում են, որ երեխաներն, ովքեր գրեթե չեն զբաղվում թվային տեխնիկաներով դատում, մտածում են ավելի ռացիոնալ և նրանց աշխարհընկալումն ավելի իրական է, քան հաճախ թվային սարքերով զբաղվող երեխաներինը: Կանադայում մանկապարտեզ հաճախող երեխաների շրջանում անցկացված հետազոտությունների արդյունքում պարզ է դարձել, որ միջինը օրական 72 րոպե կամ նույնիսկ մեկ ժամ թվային սարքերով անցկացնելը կարող է վատ անդրադառնալ երեխաների վրա: Այս մասին հրապարակել է «Science Daily» պարբերականը:



Թվային սարքերից կախվածությանը զուգահեռ մարդկանց մեջ վերանում է գիրք կարդալու ցանկությունը: Հետազոտությունները անհերքելիորեն ապացուցում են, որ կարդալու ունակությունը, կարդալու ցանկությունը և կարդալու սովորությունը համալիր ունակություններ են, որոնք ապահովում են երեխաների ու դեռահասների հոգեկան, սոցիալական ու ինտելեկտուալ զարգացումը: Մեծերի հեքիաթները լսած և վաղ տարիքում ընթերցանությամբ զբաղվող երեխաները ոչ միայն լավ են տիրապետում լեզվին, այլև ընդունակ են իրականությունը ճիշտ պատկերացնելու: Այլ կերպ ասած, ակտիվ ընթերցողը դառնում է նաև ակտիվ մտածող: Դեռահասների լեզվական արտահայտչաձևերը, մաթեմատիկական ունակությունները, ընթերցանության հմտությունները նվազում են տեխնիկական սարքերով զբաղվելու հաճախության մեծացմանը զուգահեռ:

Երեխաների ճիշտ դաստիարակության, նրաց հոգեբանության և վարքի վրա մեծ ազդեցություն կարող են ունենալ մուլտֆիլմերը: Ծնողներից շատերն են այսօր իրենց երեխաներին նստեցնում հեռուստացույցի կամ համակարգչի մոնիտորի առաջ և մուլտֆիլմեր միացնում. մինչ երեխաները զբաղված են, ծնողները մի փոքր ազատ ժամանակ են ունենում, որն իրենց են նվիրում: Բայց այստեղ առաջին հերթին տուժում են ծնող-երեխա փոխհարաբերությունը, միջանձնային հարաբերությունները, երեխան հնարավորություն չի ունենում արտահայտել իր էմոցիաները: Սակայն ինչպե՞ս են այս մուլտֆիլմերն ազդում երեխայի հոգեբանության վրա: Այն ամենը, ինչ նրանք տեսնում են էկրանին, որպես ճշմարտություն են ընկալում: Ավելին՝ երեխաներին հատուկ է ընդօրինակել այն ամենը, ինչ տեսնում են՝ փոքրիկները հաճախ են նմանակում մուլտֆիլմերի հերոսների դեմքի միմիկան և շարժումները, ձևերն ու վարքագիծը: Խնդիրն այն է, որ այն մուլտֆիլմերը, որոնց հերոսներին հատուկ են նրբանկատությունը, բարեսրտությունը, բարությունը և երեխայի համար այլ օգտակար որակները, այնքան էլ շատ չեն, ավելի շատ են ագրեսիվ և դաժան հերոսներով մուլտֆիլմերը: Մուլտֆիլմերում ագրեսիան երեխան չի ընկալում որպես ինչ-որ վատ բան, հետևաբար նա կարող է ընդօրինակել ագրեսիվ հերոսների վարքագիծը:

Հոգեբանների խոսքով, մանկական հոգեբանության համար միանշանակ օգտակար կամ վնասակար մուլտֆիլմեր գոյություն չունեն: Բնականաբար, երեխաներին պետք է հեռու պահել կոմերցիոն մուլտֆիլմերից, որոնք նախատեսված են մեծահասակների համար: Ինչ վերաբերում է մանկական մուլտֆիլմերին, երեխայի հոգեբանության վրա դրանց ազդեցությունը կախված է բացառապես երեխայի անհատականությունից և բնավորությունից:

## ԳԼՈՒԽ 2

### ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԴԵՐՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

#### 2.1 Մեդիամանկավարժության նշանակությունը և հիմնախնդիրները

Տեխնոլոգիաների ոլորտում համակարգչի մուտք գործելով, մարդկային կյանքը ավելի մեծ փոփոխությունների ենթարկվեց: Մեր թվարկության 3-րդ հազարամյակում, ազդվելով համակարգչային հաղորդակցությունից՝ աշխարհը նոր տեսք է ստացել: Համացանցային հասարակությունը պատճառ է դարձել, որ համընդհանրությունը և տեխնոլոգիական ցանցաշինությունը մուտք գործեն նաև ուսուցման ոլորտ: Տեղեկատվական ու հաղորդակցության տեխնոլոգիաների հեղաշրջման հետևանքով հեղաշրջվել են նաև ուսուցողական, տնտեսական ու մշակութային ոլորտները և ստեղծվել է մի նոր աշխարհ: Ներկա դարաշրջանում տեղեկատվությունն ու հաղորդակցությունը համարվում են որպես երկու հիմնական տարրեր:

Ստեղծվել է նոր՝ գլոբալ տեղեկատվական միջավայր: Եվ կրթությունը, որպես մշակույթի համակարգում հանդես եկող առանձնահատուկ գործունեություն, բնականաբար, չի կարող հեռու մնալ այս գործընթացից: Այս ամենի մասին լիարժեք պատկերացում կազմելու համար գործընթացը պետք է դիտարկել համակողմանիորեն՝ փիլիսոփայական, սոցիալական, մշակութային, հոգեբանական, մանկավարժական և այլ տեսակյուններից:

Այսօր մեդիամանկավարժությունը կանգնած է հետևյալ հիմնախնդիրների առջև.

- Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների միջոցով ապահովել դասավանդման որակ հանրակրթության համակարգում.
- Նոր սերնդին նախապատրաստել ընկալելու ժամանակակից տեղեկատվական դաշտը և հարմարվելու այդօրինակ պայմաններին,

- Նոր տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով զարգացնել ստեղծագործական հմտություններ,
- Հոգեբանական, տրամաբանական և մանկավարժական խնդիրների միջոցով հասնել մասնագիտական կողմնորոշման,
- Տեղեկատվական տեխնոլոգիաների օգնությամբ խթանել ինքնակրթությունն ու մտավոր անհատական զարգացումը,
- Սովորեցնել մարդուն հասկանալ, գիտակցել տեղեկատվական դաշտի ազդեցությունները, դիմակայել դրա հետևանքները:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի փաստաթղթերում մեղիակրթությունը (ԶԼՄ կրթություն) դիտվում է «մանկավարժության կոնկրետ և ինքնավար ճյուղ, որը ժամանակակից ԶԼՄ-ների և զանգվածային հաղորդակցության միջոցով տեսական և գործնական հմտություններ է իրականացնում այլ առարկաներ ուսուցանելիս, ինչպիսիք են, օրինակ՝ մաթեմատիկան, ֆիզիկան կամ աշխարհագրությունը»:

Այսօր մեղիան ուսումնասիրության համապարփակ միջոց է մարդու և աշխարհի համար (սոցիալական, բարոյական, հոգեբանական, գեղարվեստական, ինտելեկտուալ առումներով): Բայց կրթական հաստատությունները, ցավոք, դանդաղ են արձագանքում մեղիայի, նրա ընձեռած դիդակտիկ ներուժին: Մեղիայի ու դպրոցների միջև առկա են փոխգործակցության հիմնախնդիրներ:

Այսօր մանկավարժական ասպարեզում չկա մեղիայի կիրառելիության համակարգվածություն, ուսումնասիրված չէ՝ ինչ դեր են խաղում էլեկտրոնային միջոցները կրթության և դաստիարակության խնդրում: Հիմնական բարդությունն այն է, որ մանկավարժական արդեն կատարված ուսումնասիրությունները կորցնում են արդիականությունը՝ մեղիամիջոցների արագ փոփոխման հետևանքով:

Այսօր ակնհայտ է, որ քաղաքակրթության հետագա զարգացումը կախված է նրանից, թե ինչպես կընթանան հարաբերությունները մեղիայի և մարդու, մեղիայի և մշակույթի, մեղիայի և կրթության միջև: Բոլոր տեխնոլոգիաները, որոնք կստեղծվեն ապագայում, կկոչվեն «երրորդ հազարամյակի» կամ էլ «21-րդ դարի տեխնոլոգիաներ»:

21-րդ դարը բեկումնային կդառնա մարդկության զարգացման համար: Հետևաբար, վերը նշված խնդիրները պահանջում են բոլորի ուշադրությունը՝ փիլիսոփաների, տնտեսագետների, սոցիոլոգների, քաղաքական գործիչներ և իհարկե՝ մանկավարժների: Միայն համատեղ ջանքերի շնորհիվ է հնարավոր լուծել այդ խնդիրները:

## **2.1 Համացանցի արդյունավետ օգտագործումը սովորողի կողմից**

Տարիներ առաջ, երբ ստեղծվում էր համաշխարհային սարդոստայնը, քչերն էին պատկերացնում թե ընդամենը մի քանի տարի անց ինչ հեղափոխություն է կատարելու այն մարդկանց կյանքում: Մեր օրերում մեծացել է համակարգչի և համացանցի դերն ու նշանակությունը մարդու կյանքում: Այսօր աշխարհի բնակչության ավելի քան մեկ քառորդն է օգտվում համացանցից, և այդ թիվը գնալով ավելանում է: Դժվար է պատկերացնել մարդկային գործունեության որևէ բնագավառ, որտեղ թափանցած չլինի համացանցը: Համացանցի և համակարգչի դերը առանձնահատուկ է նաև կրթության և գիտության ոլորտում: Այսօր հնարավոր է կրթություն ստանալ ուղղակի համակարգիչ և համացանց ունենալով:

Համացանցը տալիս է անսահմանափակ հնարավորություններ, համացանցում ինֆորմացիայի հեղեղ է, համացանցում հասանելի են թե՛ օգտակար, թե՛ ավելորդ տեղեկություններ: Սովորողի համար դժվար է գայթակղիչ խաղերից կամ սոցիալական էջերից կտրվել և համացանցը օգտագործել կրթվելու նպատակով, դժվար է զանազանել օգտակար ինֆորմացիան ավելորդից: Այդ հարցում մանկավարժները և ծնողները պետք է ճիշտ ուղղություն ցույց տան, վերահսկեն, օգնեն: Այսօր համացանցի միջոցով մեզ հասանելի են աշխարհի շատ


գրադարաններ, աշխարհի շատ գիտական նյութեր, աշխարհի շատ կրթական  
հաստատությունների նյութեր:

### ԳԼՈՒԽ 3

## ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑՈՒՄ

Որպեսզի ստանանք պատկեր, թե նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը սովորողների վրա ինչքան է, և թե ինչքանով են այդ տեխնոլոգիաները ներգրավված ուսումնական գործընթացի մեջ, կատարեցինք հարցում 8-9-րդ դասարանի աշակերտների մեջ: Հարցմանը մասնակցել են 35 աշակերտ: Հարցմանը սովորողներին տրվել են ստորև ներկայացված հարցերը, արդյունքը ներկայացված է դիագրամների տեսքով՝ հավելվածներում:

1. Ունե՞ս արդյոք մշտական ինտերնետ հասանելիություն.




հավելված 1

2. Ո՞ր սարքից եւ ավելի հաճախ օգտվում.



հավելված 2


3. Օրական ինչքա՞ն ժամանակ եւ անցկացնում ինտերնետում.



հավելված 3



4. Ի՞նչով ես ավելի շատ զբաղվում ինտերնետում.




հավելված 4

5. Եթե չլիներ ինտերնետը, ի՞նչով կզբաղվեիր ինտերնետում ժամանակ անցկացնելու փոխարեն.


- Գիրք կարդալ, ինքնակրթություն – 28,5%
- Դրսում ընկերների հետ խաղալ – 25.7%
- Զբոսնել – 8.5%
- Հեռուստատացույց դիտել – 2.8%
- Առօրյա գործեր – 8.5%
- Նկարչություն – 8.5%
- Զբաղվել սպորտով – 11.4%
- Ոչ մի բան չանել – 5.7%

6. Արդյո՞ք թվային տեխնոլոգիները օգնել են քեզ նոր գիտելիքներ ձեռք բերել.




հավելված 5

7. Ի՞նչ ազդեցություն են ունենում թվային սարքերը քո տնային աշխատանքների կատարման վրա.




հավելված 6

8. Ինչպե՞ս ես բաշխում ժամանակդ ինտերնետի և այլ զբաղմունքների միջև.




հավելված 7

9. Թվային տեխնոլոգիները օգնում են քեզ զարգացնել.



հավելված 8

10. Թվային տեխնոլոգիները.



հավելված 9

Հարցումը ցույց է տալիս, որ սովորողների մեծ մասը մշտապես ունի ինտերնետ հասանելիություն, բոլորը ավելի շատ օգտվում են բջջային հեռախոսներից, քան այլ թվային սարքերից:

Հարցվածների փոքր մասն է համացանցը օգտագործում կրթվելու նպատակով, բայց միևնույն ժամանակ մոտ 83%-ը պնդում է, որ համացանցը օգնել է իրենց նոր գիտելիք ձեռք բերել, և սովորողների կեսից ավելին հասկանում է, որ թվային տեխնոլոգիաները խանգարում են իրենց ֆիզիկապես ավելի ակտիվ լինել:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները դարձել են մեր կյանքի անբաժան մասը: Առանց բացառության բոլոր բնագավառներում զգալի է թվային տեխնոլոգիաների ներգրավվածությունը, և բացառություն չէ նաև կրթական ոլորտը: Հատկապես երեխաները առավել շատ են օգտագործում թվային սարքերը, և ծնողների ու մանկավարժների համար կարևոր խնդիր է առաջանում. ինչպես կազմակերպել ուսուցման գործընթացը, որպեսզի սովորողը միաժամանակ և՛ չկտրվի թվային սարքերից, և՛ բավարար չափով յուրացնի ուսումնական նյութը, զբաղվի ընթերցանությամբ և կատարի տնային առաջադրանքները:

Երեխաները մանկավարժների և ծնողների օգնությամբ, ճիշտ ուղղորդմամբ և հսկողությամբ պետք է կարողանան կառավարել թվային սարքերից օգտվելու իրենց ժամանակը և ուղղվածությունը, տարբերակել լավ ու վատ ինֆորմացիան համացանցում, տեղեկատվական տեխնոլոգիաները օգտագործելուց զատ ժամանակ հատկացնել նաև միջանձնային շփումներին, զբաղվել սպորտով և այլն:

Այս ամենին զուգընթաց կրթական հաստատությունները պետք է կարողանան արագ արձագանքել տեղեկատվական տեխնոլոգիաների ընձեռած հնարավորություններին՝ դրանք օգտագործելով ի նպաստ ուսումնական գործընթացի: Դպրոցների և նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների միջև փոխգործակցությունը պետք է լինի առավել նպատավոր: Մանկավարժությունը պետք է հարմարվի անընդհատ փոփոխվող ու զարգացող տեխնոլոգիաներին և քայլի դրանց զուգընթաց:

Կրթական ոլորտում, ինչպես նաև երեխաների դաստիարակության մեջ համացանցի և թվային սարքերի կիրառելիությունը համակարգված և նպատակաուղղված լինելու դեպքում, թույլ կտա դրանք օգտագործել որպես ինքնակրթվելու արդյունավետ գործիք, ինչը կարևոր ազդեցություն ունի սովորողի հոգեբանության զարգացման և որպես անհատ ձևավորման մեջ:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Վ. Մանտուլենկո «Մեդիակրթությունը ժամանակակից աշխարհում»
2. Наталья Геннадьевна МЯКИННИК «Компьютер в жизни детей и подростков: польза или вред?»
3. Թոֆլեր Է., «Գիտելիքն ու իշխանությունը տեղեկատվական հասարակության մեջ», Երևան, 2006 թ.